ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2019 թվականի N 89 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2019 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 16-ի N 01/17.1/107-17 հանձնարարականով ներկայացված համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

10.07.2019

X

02 հուլիսի 2019թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

02 հուլիսի 2019թ. 89-Ա որոշման

**2019 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը | Իրականացվելիք հսկողության բնագավառ | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Այրում | 3-րդ եռամսյակ | բնապահպանություն և ընդերքօգտագործում<br>առևտուր<br>արտակարգ իրավիճակներ<br>պաշտպանություն<br>ՏԻՄ պարտադիր լիազորություններ<br>ոսիկանություն<br>ֆինանսներ<br>աղբահանություն<br>հողաշինություն և հողօգտագործում<br>կրթություն<br>մշակույթ<br>ֆիզիկական կուլտուրա և սպորտ<br>առողջապահություն<br>անասնաբուժություն<br>տրանսպորտ և կապ<br>քաղաքացիական ակտերի գրանցում<br>սոցիալական պաշտպանություն<br>քաղաքաշինություն | Խմբի ղեկավար,<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ | Ֆելիքս Ափինյան<br>Սամվել Գևորգյան<br>Գուրգեն Հարությունյան<br>Սամվել Սուքոյան<br>Սամվել Սուքոյան<br>Հայկ Փաշինյան<br>Աղաբեկ Գալստյան<br>Ժորա Խաչատրյան<br>Արմեն Ճաղարյան<br>Համլետ Փիրումյան<br>Խաչատուր Խաչատրյան<br>Խաչատուր Խաչատրյան<br>Խաչատուր Խաչատրյան<br>Նարինե Ճաղարյան<br>Արկադի Ամիրխանյան<br>Արտակ Սարգսյան<br>Գագիկ Մելիքբեկյան<br>Հարություն Քոչարյան<br>Միսակ Մելքումյան |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ